ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- 2016թ. N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի հ. 451-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Հալաբյան փողոց հ.31 շենքի թիվ 29՝ 28.9 քմ մակերեսով բնակարանը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 04.12.2015թ. հ. 04122015-01-0180 վկայական/ սեփականության իրավունքով անհատույց օտարել /նվիրել/՝ Մելանյա Ալբերտի Ամիրյանին և Անդրանիկ Էդգարի Մատվեևին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման նախապատրաստման համար հիմք է հանդիսացել Մելանյա Ամիրյանի՝ Հալաբյան փողոցի h.31 շենքի h.29 ՝28.9 քմ ընդհանուր մակերեսով բնակարանն իր ընտանիքի անվամբ մասնավորեցնելու վերաբերյալ դիմումը:

Հալաբյան փողոցի h.31 շենքի h.29 բնակարանը, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 04.12.2015թ. h.04122015-01-0180 վկայականի հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Քննարկվող բնակարանը, 26.09.1968թ h.12487 օրդերի տվյալների համաձայն, պատկանել է հանգուցյալ Ռիմա Հակոբյանին, ով հանդիսացել է Մելանյա Ամիրյանի մայրը: Վերջինս նշված բնակարանում բնակվում է տղայի՝ Անդրանիկ Մատվեևի հետ, որը ներկայումս ծառայում է ՀՀ զինված ուժերում: Մելանյա Ամիրյանը, համաձայն ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Մաշտոցի անձնագրային բաժնի 20.04.2016թ. h. 22/10-1180 տեղեկանքի, սկսած 1991 թվականից փաստացի հաշվառված բնակվում է քննարկվող բնակարանում, վճարում կոմունալ և սպասարկման վճարները, սակայն իրավահաստատող փաստաթղթերի բացակայության պատճառով մինչ օրս չի կարողացել սեփականաշնորհել այն:

Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի h.451-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ Ծրագրի 4-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և/կամ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի h.451-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները, ուստի նշված հասցեում գտնվող բնակարանի անհատույց օտարման համար անհրաժեշտություն է առաջացել ընդունելու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՄՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ